բազմահատոր գրուածքներ թողուց, արգասիք իր ըրած քննութեանցը՝ եբրայեցերէն, սանսկրիտ, ճենացի, հայերէն, գոթ, ասորերէն, եթովպիարէն, սահիտեան, մեմփիսական, գոթացի, վրացի, սլաւեան, արաբացի, պարսկական, բերբերական, ճամբոնացի, անգլոյ-սաքսոն, և կալլէսի լեզուաց գրքերէ և գրուածներէ։ Մեռնելէն քիչ առաջ լմնցուց «Նորագիւտ ծանօթութիւնք Առակաց գրքին վրայ (Notes originales sur le Livre des Proverbes), որուն մէջ 16,000 կոչմունք կամ վկայութիւնք կան Արևելեան Հարց գրքերէն։ Օքսփորդի Բոդլիըն (Bodleian) գրատունը Մալանէն ընծայուած հատոր մը ունի, որ է գլուխ մը Սաղմոսի՝ 80էն աւելի լեզուներով բաղկացեալ։

ՎԵՍՏԵԱՆ ԿՈՅՍ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՌԱՋԻՆ ԴԱՐՈՒ

ԳԼՈՒԽ Բ.

ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏ

ԽՈՒՌՆ բազմութիւնն, որ ամփիթատրոնին աստիճաններուն վրայ տեղաւորուած էր, այն ընդարձակ շէնքին աւելի մեծ երևոյթ մը կու տար։

Կայսերական օթեակին դուռն բացուելով ներս մտաւ Դոմետիանոս և բազմեցաւ իւր ոսկեզօծ գահուն վրայ։ Անմիջապէս իւր քովը կը գտնուէր Դոմետիա, և սակաւիկ մ՚այլ անդին վեստեան կուսանք։

Խուլ մրմունջ մը կ՚ընթանար ժողովրդեան մէջ. անհամբեր ամբոխն կը քրթմնջէր այսչափ երկար սպասելուն համար, և հանդիսին սկսելը կը պահանջէր։ Վերջապէս երկու սուսերամարտք, մին կեղտացի և միւսն Թրակացի, կրկէսին մէջ խոյացան. որոտընդոստ ծափահարութիւն մ՚էր որ փրթաւ և բոլոր աչքերն սևեռեցան երկու ախոյաններուն վրայ։

Կեղտացւոյն զէնքերն էին՝ սաղաւարտ մը վրան ձկան պատկերով, մանգաղ մը և վահան մը։ Թրակացին ունէր տէգ մը, դաշոյն մը և կլոր վահան մը։

Երկուքն ալ դէպ ՚ի կայսերական օթեակն յառաջացան, և յարգանօք խոնարհելով գոչեցին. «Կեսա՛ր, կ՚ողջունեն զքեզ անոնք որ պիտի մեռնին»։ Ահաւո՛ր ողջոյն. նշան կրուոյ, զոր մահուան անձնուէր խեղճ ստրուկներն ստիպեալ էին ուղղելու առ բռնաւորն, որ կը զուարճանար անոնց հոգեվարքը դիտելով։

Երկու հակառակորդներն կրկին մէջտեղ գնացին և զիրար փորձելու համար սկսան օդուն մէջ փայտեայ սուրեր նետել, զորս հիանալի ճարպիկութեամբ կը բռնէին. յետոյ յարձակեցան իրարու վրայ և կռիւն սկսաւ։

Մինչդեռ անոնք յաղթութեան համար կը

digitised by A.R.A.R.@

պատերազմէին, և բոլոր հանդիսականք, յուզեալ, աչքէ չէին հեռացներ նոյն վայրկենի յաղթականը, անդին ուրիշ երկու տուսերամարտներ կը սպասէին լիրիսիենաճ դրան յենած, ուսկից զուրս կը տարուէին պարտեալց դիակները։ Նոքա տարօրինակ հակապատկեր մը կը կազմէին։

Երիցագոյնն կարծես հազիւ 30 տարեկան էր։ Նա կորովի կազմուածով, վահանեան ուժով, հասարակ դէմքով և կատաղի նայուածքով մէկն էր։

Կրտսերն պատրիկի մը կերպ ունէր, և օրուն վիզը շրջապատած մեռաղեայ տուրը կը ցուցներ անոր գերութեան վիճակը. իր փափուկ անդամներն արտասովոր այժ մը կը ծածկէին իրենց մէջ, և անոր գիմագծերն՝ որպ մէջ կանացի կանոնաւորութիւն մը կը տեսնուէր՝ շատ գեղեցիկ էին։ Բարակ և խարտիշագեղ ընչացքն անոր վերին շրթունքը կը հովանաւորէր և մասամբ կը ծածկէր բերանը, և որուն դէպ 'ի կզակը ծռած ծայրերն առնական կորով և երկաթեայ կամք մը ցուցնէին։ Անոր մութ կապոյտ և մեղամղձոտ արտայայտութեամբ լի աչքերն՝ կ'ուզուրուէին կոսոյ մէջց՝ գրեթէ սև գոյն առնելով։ Կարծես թէ նա չէր մտածեր քիչ մը վերը տեղի ունեցիր կռուոյն վրայ, ապրի քաջոյը մտածմունք մը իր միտքը կը զբաղեցնէր. իր տխուր ակնարկը չէր կրնար հեռացնել Դամեսիանոսի օթեակէն, և մերթ ընդ մերթ իր լայն կուրծքէն հառաչանքներ կ'արձակէր։

— Մի՛ հառաչեր, Պարի՛ս, ըսաւ յանկարծ իր ընկերն հայրատութեամբ։ Ողբերդ պահէ այն պահուն՝ յորում դիս քեզ հակառակորդ պիտի ունենաս։

Պարիս զարձաւ, ոտից ցզուխ զննեց իր խօսակիցը և արհամարհանք ուսերը թօթուելով ժպտեցաւ։

Ասուերամարտն բարկութիւնէն շրթունքները խածաւ. երեսին գոյնը կապոյտ զարձած էր։

— Գեղեցիկ Պարիս, ըսաւ նա բռնի հանդարտութեամբ, շատ աչքեր արտասունք պիտի թափեն՝ երբ կրկիսին մէջ ինձմէ զրթութիւն պաղատես։

— Լաւ՝, Փուլվիոս, և ա՛լ զլուխս մի՛ ցաւցրներ, պատասխանեց Պարիս ամենամեծ անտարբերութեամբ։

— Ի՛հ, զլխուդ ցաւը շատ պիտի չտեւէ, գոչեց Փուլվիոս ապառնիէն շարժուելով մը։

Բայց Պարիս վերստին ընկղմած իր մտածութեանց մէջ՝ բան չի տեսաւ, բան չի լսեց։

Բանկարծ մեծ աղաղակ մը և ասատիկ ծափահարութիւն մը լսուեցաւ. կեղտացին գիտին տապալուած էր։

Թրակացին կեռ ևս հարուածները կը տեղար անոր վրայ 'ի մեծ զոհունակութիւն ամբոխին. գրեթէ նոյնհետայն լռութիւնը տիրեց՝ և երկաթէ ճանկով մը կրկիսէն կարս քարշեցին խեղճ կեղտացուն դիակը, յետոյ սուսերամարտից պլեաւորն մնաեենալով Պարիսաւ և Փուլվիոսի, հրամայեց անանց յառաջ խաղալ։

Պարիս ձեռք առաւ երեքժանին, վերուց իր ոտից քով ոլորած ցանցը և յակամայ զարձեալ նայեցաւ դէպ 'ի կայսերական օթեակը։ Նա առաջուան Պարիսն չէր. թեթեւ մը գունատուած էր անոր սովորական ժպտագեղ դէմքն, արագ և բուռն կրակ մը կը ցոլար անոր խոր աչաց մէջ։ Ակնթարթի մը մէջ կրկիսին կեդրոնն հասաւ, հակառակորդն ալ եռեւէն։ երկուքն ալ ողջունեցին գիմեսիանոս և անկարգութեամբ իրարու վրայ յարձակեցան։

Հասկցաւ Պարիս թէ զօրաւոր թշնամի մ'ունէր իր դիմաց, ուստի բոլոր իր ուժը և ճարտարութիւնը գնա գէնքնկեց ընելու գործածեց։ Մերթ կը կուէր իր երեքժանիով, և մերթ կը ջանար գնա իր ցանցին մէջ ըմբռնել, բայց միշտ յանգուտս, որովհետև Փուլվիոս ամենամեծ յաջողութեամբ ինքզինքը կը պաշտպանէր։ Ի՛ սակայն ասկաւ ասկաւ սկսաւ տեղիք տալ, բարկութիւնն կը կուրացնէր գնա, մինչդեռ Պարիս հանդարտ և անվրդով, կը ժպտէր անոր հայհոյութիւնքը և անէծքը լսելով։

Պայքարն յառաջ կը մղուէր, տուսերամարտից յոգնածութիւնն կը հասկցուէր իրենց զօրաւոր շնչառութենէն, և սակայն նոքա կը կռուէին միշտ նոր կատաղութեամբ։ Հուսկ ուրեմն, Փուլվիոս ինկաւ, ցանցամարտին և

digitised by A.R.A.R.@

բեքժանիէն հարուածէալ, որուն յաղթանակն ժողովրդեան եռանդը բորբոքեց, որ սկսաւ ծափահարել. մինչդեռ յաղթականն, յանձնապատան ստուերամարտին մարմնոյն վրայ ծը-ռած կ'ըսէր տոգնապալից.

— Թէ՛ղմ փուլվիոս, ինչո՞ւ ճակատագիրն ուզեց որ մահուանդ պատճառ լինիմ. զքեզ չէի ուզեր սպանել։

Այս խօսքերս ըսելէն յետոյ, ձեռք առաւ մահատու զէնքը և պաշտպանողական դիրք բռնեց։ Մի և նոյն պահուն, ուրիշ ստուերամարտ մը իւր վրայ յարձկեցաւ. բայց կուռն երկար չի տևեց և եղկելին Փուլվիոսի վիճակին հասաւ։

— Կեցցե՛ս, Պարի՛ս, կը գոչէին հանդիսականք։

Բայց Պարիս կը հառաչէր. և կարծես աւելի տխուր էր իւր բրած յաղթանակներուն վրայ քան թէ ուրախ. հանդարտութեամբ ուրիշ ոսոխի մը կը սպասէր, որ շատ չուշացաւ։ Այս աւելի ճարտար և աւելի գօրեղ քան իւր նախորդները, երգելով յարձկեցաւ Պարիսու վրայ և դնա բազկէն վիրաւորեց։ Ցաւէն աւելի արեան տեսքն զրգռեց ցանցամարին կատաղութիւնը, որ քիչ ժամանակուան մէջ ցանցով պատեց իւր թշնամին մինչև կէս մէջքը, որ այլ չի կարենալով դիմադրել ծունկ զրաւ և գթութիւն հայցեց։

Պարիս գետին նետեց ցանցն և երեքժանին, և արագ շարժմամբ ձեռքերը միացնելով, պարտելոյն համար կպսերական գթութիւնն հայցեց։ Դոմետիանոս իբր հաւանութեանն նշան խոնարհեցուց իւր բթամատը, և ստուերամարտն հեռացաւ. ժողովրդեան մը-մունջին մէջէն։ Քաջասիրտ ըսիրին ճակատն քրտանց մէջ կը լողար, արիւնն կը վազէր իւր վէրքէն, և սակայն դեռ պատրաստ էր չորրորդի մը հետ այլ մաքառելու, բայց ժողովուրդն. որ կը սիրէր զՊարիս գոչեց. « կը բաւէ »։

— Կեսար, թոյլ մի՛ տար՝ որ այս վատհագնս իյնայ յոգնութենէ ընկճեալ, ըստ Դոմիտիա կայսեր դառնալով։

— Արէս վկայ, վրայ բերաւ. Դոմետիանոս անհամբերութեան ձև մ'ընելով, գէշ չէր ըլլար՝ եթէ կարենայի Պարիսաս հագեվարքը տեսնել. ո՜հ, նա ո՛րչափ գեղեցիկ պիտի ըլլայ արդէօք մահուան օրհասին, և յետոյ իրեն արձան մը կանգնել կու տայի... Բայց համբերութի՛ւն, փափաքս ուրիշ անգամուան կը պահեմ։ Այս ըսելով խաղերու արարողապետին նշան ըրաւ ստուերամարտից խաղերը վերջացընելու։

Պարիս յաղթող հռչակուեցաւ. յաղթականին վարձատրութիւնը եղան զոյնզգոյն ժապաւէններով զարդարուած արմաւենեայ պսակ մը և արծաթոյ գումար մը։

Այն ժամանակ խոր լռութիւն մը տիրեց ամփիթատրոնին մէջ, իբրև թէ հանդիսատեսք մարտարիոնէ արձաններու փոխուած ըլլային։ Համբ, անշարժ, ամենափոքր ձայնին ուշադրութեամբ ականջ կը դնէին և տենդային յուզմամբ ամենէն աւելի շահագրգիռ և անդոսի հանդիսին կը սպասէին։

Եւ յիրաւի, քիչ մը վերջը խուլ քրքիջ մը ինչիսի մը լսուեցաւ, և գրեթէ նոյն հետայն հազիւ քսանամեայ դեռատի օրիորդ մը, հազած երկայն սպիտակ զգեստ մը, կողմնակի բացուած գունէ մը ներս մղուեցաւ կոպտաբար։

Նա միջահասակ էր, բայց իւր ճարպուկ և բարակ մարմինն ճշմարիտ կատարելութեան հասած էր։ Իւր ոսկեգոյն մազերն խիտ խիտ գանգուրներով կը տարածուէին կարապանման պարանոցին վրայ, իսկ կապտագոյն և մեղրոյ մեծ աչքերն հաւասով և եռանդեամբ կը շողշողային։

Ցամրարէն յուսաղեց նա, բազուկներն կուրծքին վերայ խաչաձև ամփոփած։ Երբ ամփիթատրոնին կեդրոնն հասաւ աչք մը առաւ հանդիսականաց՝ և տեսնելով որ ամէնքն զինքը կը դիտեն՝ այտերն կարմրեցան, արտասուքի կաթիլ մը պլպլաց իւր աչքերուն մէջ, և շրթունքները թեթև մի ցնցուեցան զոգցես աղօթելու համար։

Նոյն պահուն սրսակոտոր աղաղակ մը լսուեցաւ վեհատեսն կուսանաց օթեակէն. ամէնուն ուշադրութիւնն հոն դարձաւ և սակայն ոչ ոք բան մի նշմարեց։

Բայց համայն հանդիսատեսք հաւասարապէս չէին ուրախանար մանկամարդ քրիստոնեուհւոյն տանջանաց մերձենալը տեսնելով, և ստորին դասակարգին սահմանուած տեղը,

digitised by A.R.A.R.@

սիրտ մը կը հեծէր զնա դիտելով. պեռուքա հագած ծերունին էր։

— Տէր Յիսուս, կը մրմնջէր նա, դու որ ըսիր առաքելոցդ. « Զոր ինչ խնդրիցէք յանուն իմ, տացի ձեզ, » փրկէ զՓլորոնիա, և փոխանակ նմա՝ ինձ պարգևէ մարտիրոսութեան պսակը։

— Ի՜նչպէս գեղեցիկ է այդ քրիստոնեայ օրիորդն, կ'ըսէր մի և նոյն ժամանակ Սեքստոս իւր Պուպլիոս բարեկամին, կարծես նոյն իսկ պարկեշտ Անահիտն է... Այսքան շնորհք պէտք չէ որ անհետանան վայրի գազանաց ճիրաններուն ներքև. կրկէսին մէջ պիտի նետուիմ և պիտի ազատեմ զնա առիւծէն։

— Կարեկցութիւնն միտքդ կը խռովէ, Սեքստո՛ս. իջի՛ր կառարանին մէջ, եթէ կը յանդգնիս, և Դոմիտիանոս սուսերամարտներուն սպաննել կու տայ զքեզ։

— Ո՛չ, չեմ կրնար անոր մահը տեսնելու քաջասրտութիւն ունենալ, կրկնեց Սեքստոս պատրիկն դէմքն իւր ձեռաց մէջ ծածկելով։

Նոյն միջոցին, առիւծն իւր վանդակէն դուրս կ'ելնէր, և իւր թաւ բաշը ցնցելով հանդարտ և ծանր քայլերով ասդ անդ կ'երթար ու կու գար։ Երեք անգամ խոր մռնչիւն մը լսուեցաւ. անապատին արքայն հանդիսատեսները կը բարևէր։

Յետոյ կանգ առաւ և գլուխը շարժեց, բաշը ցրուեցաւ և աչերն կատաղութեան կրակով բորբոքեցան։

. Փլորոնիա ծնրադրած էր. առիւծն մօտեցաւ, հոտոտեց զնա և սկսաւ անոր շուրջը դառնալ կարծես վախնալով անոր դպչել։

Եւ ահա, հեծկլտալու պէս տկար աղաղակ մը դարձեալ լսուեցաւ վեստեան կուսանաց կեցած տեղէն, և Պարիս որ Լիբիտինեան դռնէն նշմարած էր կուսնելիայի յուզումը, տեսաւ որ նա ձեռքերը դէպ 'ի վկայն կը կարկառէր։

Կատաղի գազանին շնչառութիւնն սարսուց քրիստոնեայ օրիորդը, նորա հաւատքը անպարտելի մնաց, բայց ջղային դող մը ցընցեց անոր բոլոր անդամները և ջղաձգաբար ակռաներն սկսան կափկափել։ Շատ ճիշդ է, որ մահուան վայրկեանն, նոյն իսկ ամենաքաջասրտաց այնպիսի ակամայ սոսկում կ'ազդէ՝ զոր դժուար է նուաճել։

Առիւծն իւր զոհն հոտոտելէ յետոյ անշարժ կեցաւ. ապա անօթութենէ գրգռեալ յարձակեցաւ զնա յօշոտելու համար։

Մի և նոյն վայրկենին մարդ մը կայծակի արագութեամբ կտրեց զամփիթատրոնը և երեքժանիով զարկաւ առիւծին որ կատաղութենէն մռնչեց։ Ահաւոր կռիւ մը տեղի ունեցաւ. վիրաւորուած գազանն բոլոր կատաղութիւնը զինքը հարուածողին վրայ դարձուց, և պահ մի մարդ և անասուն, փոշւոյն մէջ գլորտկելով, տձև կոյտ մը միայն կը կազմէին։ Այն ժամանակ առաջինէն աւելի ահաւոր մռնչիւն մը լսուեցաւ, և ցանցամարտն Պարիս, յաղթական դուրս ելաւ իւր ցանցին մէջ առիւծը բռնուած։

— Ապրի՛ս, Պարի՛ս, ապրի՛ս, գոչեցին ամէն կողմանէ սքանչացող հանդիսականք։

Դոմիտիանոս, որ շատ զուարճացած էր այն տեսարանէն, դիւրաւ ներեց պատանի ըմբշին յանդգնութեան և հրամայեց զնա իւր առջև բերել։

— Ինչո՞ւ ազատեցիր Նազովրեցին, հարցուց նա քննողական աչքով դիտելով։

— Կռուելու անդիմադրելի եռանդ մը զգացի առիւծը տեսնելով, ո՛ կեսար, և փորձութեանս չի կրցայ յաղթել։

— Լաւ ուրեմն, ասկէց վերջը դու գազաններու հետ պիտի կռուիս. գալով Նազովրեցւոյն զնա քեզ կը յանձնեմ, ի՛նչ կ'ուզես ըրէ։

Փլորոնիա, որ կրկեսին մէջ դեռ ևս ծնրադրեալ կեցեր էր, դուրս տարուեցաւ, և տեսարանն անընդհատ մինչև գիշեր տևեց։ Երբ նաւամարտութեան խաղերն այլ վերջացան, ժողովուրդն նոյն եռանդեամբ վար իջաւ աստիճաններէն, և բազմաթիւ դրանց շնորհիւ քիչ ատենէն ամփիթատրոնն պարպուեցաւ։

Ի՜նչ ամօթխածութիւն, կ'ըսէր Սեքստոս, բարեկամին կռթնած՝ դուրս ելնելու պահուն։

— Որո՞ւ վրայ է խօսքդ։

— Է՜հ Նազովրեցի աղջկան... Ո՜հ, ո՞ւր էր թէ՝ Պարիսու տեղ ես ըլլայի գազանին դէմ կռուողն...

digitised by A.R.A.R.@

— Կեսաբ դիւրաւ ներեց սուսերամարտի մը յանդգնութեան, բայց պատրի՛ մը նկատմամբ այնքան ներողամիտ չէր զանուեր։

— Գոնէ եթէ կարենայի նորա հետքը գտնել։ Գուբլի՛ոս, անպատճառ կ'ուզեմ տեսնուիլ Պարիսու հետ։

Սեքստոս իւր բարեկամը տարաւ դէպ 'ի շէնքին այն մասը, ուր կը քաշուէին սուսերամարտք յետ կռուոյն։

Ցանցամարտն իւր ընկերակցաց հետ չէր. յետ պատսպարելու զՖիլորոնիա ապահով տեղ մը, խառնուած էր բազմութեան մէջ ըկնուանելիա տեսնելու համար։ Երբ անոր պատգարակն անցաւ իւր քոյրն, տրամախառն ուրախութեամբ դիտեց զնա։ Թշուառն, կը յանդգնէր վեստեան կուսի մը ձեռքին ցանկալ։ Հազիւ կը պատրաստուէր ներս մտնել, յանկարծ մէկը ուսին զարկաւ, ետ դարձաւ և զարմացմամբ տեսաւ սպիտակ մօրուք և պատառոտուն զգեստաւոր ծերունի մը։

— Դո՛ւ, ազատեցիր զՖիլորոնիա, ըսաւ նա. ինդրեմ կատարեալ ըրէ բարեգործութիւնդ, չըլլայ թէ խեղճ աղջիկն հարկաւորի անիծանել այն կեանքը՝ որ քեզ կը պարտի։ Երկնից զուներն պիտի բացուին իրեն համար, չըլլայ որ զնա դժոխքի արժանացնես։

Պարիս ձեռքը ծերունւոյն կարկառեց և քաղցրութեամբ ըսաւ.

— Այն նազովրեցի օրիորդն անշուշտ քո զուստրդ է, կը զգամ մտատանջութիւններդ։ Բայց մի՛ վախնար, սուսերամարտն Պարիս բնաւ չի հարստահարեր տկարները, և թէպէտ գերեաց անուրը կը կրէ, սակայն իւր կուրծքին մէջ բարախող սիրտն՝ կայսեր սրտէն աւելի ազնուական է։ Հոս ինձ սպասէ։

Այս ըսելով, նա հեռացաւ և շտապով եկաւ Փլորոնիայ հետ։ Օրիորդն, յոգնած և սարսափահար, հազիւ կարող էր սուսերամարտին հետևիլ. բայց հազիւ թէ նշմարեց գծերուն, միացաւ ձեռքերը և անկարագրելի ուրախութեամբ զուեց.

— Անիկետո՛ս, հայր իմ։

Անիկետոս խանդաղատանօք զայն սեղմեց սրտին վրայ։

— Հայր, առաջ տարաւ Փլորոնիա, ամենակալն Աստուած զիս արժանի չհամարեց մարտիրոսութեան մրտեռնոյն...

— Օրհնենք իւր տուսածային կամքը, զուստր իմ, պատասխանեց ծերունին։

Ցետոյ մտոնելով Պարիսու, որ մէկուսի էր քաշուած, ըսաւ.

— Շնորհակալ եմ. քու ազատած կուսին աղօթքն՝ քեզ համար ամէն օր դէպ 'ի Սուրբն սրբոց պիտի բարձրանան։

Ցանցամարտն այս խօսքերս չի լսեց, բոլորովին ուրիշ տեղ էր միտքը։

— Հայր, կոստանդիա ամիիթատրոն եկած էր, ըսաւ Փլորոնիա։

Այն ժամանակ միայն Պարիս ցնցուեցաւ իւր մտածմունքներէն, և Անիկետոսի դառնալով՝ ըսաւ.

— Շատ պիտի ցաւիմ, եթէ ա՛յլ ևս զիրար չի տեսնենք։ Ըսէ՛ ինձ, ո՞ւր կը բնակիս, և առաջին անգամ որ կարենամ՝ այցելութեան կու գամ։

— Այս մտերս. բայց հոգ մի՛ ըներ, պիտի չի մոռնամ առ քեզ ունեցած պարտքս, և յուսամ որ քիչ ժամանակէ տեսնուինք։

— Երախտապարտ եմ քեզ, տուերամ՛բաւ, ըսաւ Փլորոնիա։ Աստուած քու միջոցաւ ինձմէ իր անուան համար մարտիրոս ըլլալու փառքը, սակայն իւր կամքն օրհնեալ ըլլայ։ Դարձեալ կը կրկնեմ որ մեծապէս երախտապարտ եմ քեզ։

Այս ըսելով հօրը հետ հեռացաւ։

Դիշերն հասած էր. լուսնին տխուր ճառագայթներն կը լուսաւորէին բոլորովին ամայացած վիհթարի շէնքը, և բաց 'ի սեան մը հետև պահուըտած երկու անձերէ, ոչ ոք ներկայ եղած էր վերոյիշեալ տեսարանին։

Այն երկուքն էին Փաւլիոս և իւր բարեկամն։ Լսած էին ամենայն ինչ, բայց Սեքստոս չէր համարձակած մտնենալ քրիստոնեայ կուսին։ Այն ալեւոր և մանկամարդ օրիորդն, իրենց տկարութեամբ հանդերձ, յարգանք կ'ազդէին։ Եւ սակայն չուզեց անոնց հետքը կորսնցնել և ետևէն գնաց, մինչև տեսաւ անոնց՝ Ալենտինեան զատիվերին վրայ՝ պարզ արտաքինով տան մի մէջ մտնելը։

(Շարայարելի).

digitised by A.R.A.R.@